ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 11 մայիսի 2020թ.

2020 թվականի մայիսի 11-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին» որոշման նախագծի թեմայով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կարիքների համար գույք ձեռք բերելու համաձայնություն տալու մասին

համայքնի ավագանու որոշումների նախագծերի քննարկում:

Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ որոշման **նախագիծը** մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և 29-րդ հոդվածի համաձայն: Նախագիծը մշակելիս հաշվի է առնվել այն, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N 166-Ն որոշմամբ պետական բյուջեից համայնքին է հատկացվել 7028,8 հազար դրամ դրամաշնորհ և հիմք է ընդունվել Կոտայքի մարզպետարանի և

Բյուրեղավան համայնքի միջև կնքված 2020 թվականի ապրիլի 1-ի N 166-15 պայմանագիրը, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել բյուջեի վարչական մասի մուտքերն ավելացնել 7028,8 հազար դրամով:

Առաջարկվում է համայնքի բյուջեով նախատեսված վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 59697,3 հազար դրամն ավելացնել 7028,8 հազար դրամով և վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերի 49350,0 հազար դրամը ավելացնել 7028,8 հազար դրամով:

Անհրաժեշտություն է առաջացել Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրում կառուցել համայնքային կենտրոն, որի կառուցման նպատակով 2020 թվականի բյուջեով նախատեսված ֆոնդային բյուջեից 6128,8 հազար դրամը հատկացնել «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» (բաժին 01, խումբ 1, դաս 1) ծախսերի «5111» հոդվածին՝ շենքերի և շինությունների ձեռք բերմանը:

Համայնքի բյուջեի «Բնակարանային շինարարություն» (բաժին 06, խումբ 1, դաս 1) «5129» հոդվածին հատկացնել 900,0 հազար դրամ:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը: Նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

Որոշվեց՝

1. հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստի երկրորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կարիքների համար գույք ձեռք բերելու համաձայնություն տալու մասին»*** որոշման նախագծի շուրջ Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13–րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող և օրենքով պետական մարմիններին, կազմակերպություններին և պաշտոնատար անձանց

իրավասությանը չվերապահված ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ, որոնց վերաբերյալ կազմում է արձանագրություններ: Որոշման ընդունման համար հիմք է ընդունել Կոտայքի տարածքային սպառողական կոոպերատիվի վարչության նախագահի 2020 թվականի ապրիլի 30-ի N 1/1 և «Վարմօն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2020 թվականի մայիսի 11-ի «146-01/Վ-020» գրություններն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը:

Համայնքի ղեկավարը առաջարկում է Բյուրեղավան համայնքի կարիքների համար օգտագործելու նպատակով մեկ անձից գնման ձևով ձեռք բերել Կոտայքի տարածքային սպառողական կոոպետատիվին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Նուռնուս թիվ 13 հասցեում գտնվող խանութը՝ 213,2 քմ մակերեսով, և հողամասը՝ 0.0250 հա մակերեսով (գրանցման վկայական՝ 2547082, տրված 2008 թվականի հուլիսի 09-ին), որի համար համայնքի բյուջեից անհրաժեշտ է հատկացնել 5 800 000 (հինգ միլիոն ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Նշված շինությունը վերանորոգվելուց հետո օգտագործվելու է որպես Նուռնուս բնակավայրում համայնքային կենտրոնի շենք, որի ձեռք բերումն և վերանորոգումը իրականացվելու է ՀՀ պետական բյուջեից ստացված սուբվենցիոն ծրագրով: Կոտայքի տարածքային սպառողական կոոպետատիվը անշարժ գույքի օտարման համար առաջարկել է 5800000 (հինգ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ն անշարժ գույքը գնահատել է 5 370 000 (հինգ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Որոշվեց՝

1. հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կարիքների համար գույք ձեռք բերելու համաձայնություն տալու մասին որոշման նախագծին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան